

**«Նոր Սերունդ»
Մարդասիրական Հասարակական
Կազմակերպություն**

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ամսաթիվ՝ 24.12.2020թ.

ՄՐՑՈՒՅԹ #. «Ծրագրի աուդիտ» NG-45-002-2012

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հրավիրում է իրավասու մատակարարներին ներկայացնել առաջարկներ կազմակերպության 1 ծրագրի համար՝ ըստ հետևյալ մասնագրերի:

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ձեր գնառաջարկը պետք է ներկայացվի պահանջված ձևով, ուղեկցված անգլերեն կամ հայերեն լեզուներով համապատասխան տեխնիկական փաստաթղթերով, և

Սույն հրավերով նախատեսված պայմաններին չբավարարող գնառաջարկները չեն ներկայացվի ընտրող հանձնաժողովի քննարկմանը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՐԸ

Ծրագրի Աուդիտ (մանրամասները տես կից Տեխնիկական հավելվածում)

Տեխնիկական Մասնագրերում նշված չափանիշներից ցածր տվյալներով գնառաջարկները կմերժվեն որպես տեխնիկական պայմաններին չհամապատասխանող:

ԳՆԵՐԸ

Գները պետք է ներկայացվեն ՀՀԴ-ով: Գները պետք է լինեն ամրագրված և ենթական չեն որևէ փոփոխման Պայմանագրի իրականացման ողջ ընթացքում:

ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձեր գնառաջարկը պետք է վավեր լինի մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3 ծրագրերի աուդիտը պետք է իրականացվի պայմանագրի կնքումից հետո 20 օրվա ընթացքում /ներառյալ վերջնական եզրակացության ներկայացումը/, եթե կողմերն այլ ժամկետ չեն պայմանավորվել Պայմանագրի կնքման ժամանակ:

ՎճԱՐՈՒՄՆԵՐԸ

Վճարումը կկատարվի հաշիվ-ապրանքագրի և ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտի ստորագրվելուց հետո 10 բանկային օրվա ընթացքում: Վճարումը կկատարվի ՀՀԴ-ով՝ բանկային փոխանցման միջոցով:

**New Generation
Humanitarian Non-Governmental
Organization**

INVITATION TO TENDER

Date of Issue: 24.12.2020

TENDER No. "Audit" NG-45-002-2012

INTRODUCTION:

New Generation Humanitarian NGO invites offers from eligible suppliers for the provision of audit services for 1 project of the organization.

COMPONENTS OF TENDER REQUIRED:

The tender application must be provided in the required format, accompanied by adequate technical documentation in English or Armenian, and information on:

Tenders which do not include all the components of the application as listed above will be rejected.

TECHNICAL SPECIFICATIONS:

Project Audit (as per details in enclosed Technical Annex)

Tenders with lower technical parameters than stated here will be rejected for failure to comply with the technical requirements.

PRICING:

Prices must be quoted in AMD. The prices must be firm and fixed and not subject to any adjustment following the date of signature of the contract.

VALIDITY:

The tender must be valid until 31st of December, 2021.

DELIVERY SCHEDULE:

The delivery of services should be completed in 10 calendar days from the date of Contract signing unless otherwise agreed by the parties at the contract signature.

PAYMENT:

The payment for the invoice will be made within 10 banking days after of services and signing of the acceptance certificate. Payment will be made in AMD via bank transfer.

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաջողակ մասնակիցը պետք է առաջարկն ընդունելու մասին նամակը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում կնքի պայմանագիրը:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆՇՆԵՐԸ

Ներկայացված առաջարկների գնահատումը իրականացվելու է առաջարկվող գնի հիման վրա: Նախքան Պայմանագրի կնքումը Գնորդը կարող է այցելել ապագա մատակարարներին կամ պահանջել այլ փաստեր՝ պատվերը բարեհաջող իրականացնելու նրանց կարողությունը ստուգելու նպատակով: Ի լրացումն, Գնորդը կարող է այցելել ապագա մատակարարներին՝ ստուգելու նրանց համապատասխանելիությունը սույն հրավերով սահմանված մրցութային պահանջներին, մասնավորապես՝ անընդունելիության չափորոշիչներին կամ մերժման հիմքերին: Մատակարարից կարող են պահանջվել նաև լրացուցիչ փաստաթղթեր, որպեսզի ստուգվի նրանց ունակությունների համապատասխանությունը սահմանված պահանջներին:

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Այն մասնակիցները, որոնք ներգրավված են ստորև ներկայացված դեպքերից որևիցե մեկում, չեն կարող մասնակցել մրցութային գործընթացին.

- (ա) ճանաչվել են սնանկ կամ գտնվում են սնանկացման փուլում, կառավարվում են դատարանների կողմից, վարկատուների հետ ֆինանսական հարաբերությունների կարգավորման գործընթացի մեջ են, ժամանակավորապես դադարեցրել են գործունեությունը կամ գտնվում են ցանկացած նմանաօրինակ գործընթացների մեջ, որոնք առաջացել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- (բ) մասնագիտական գործունեության հետ կապված իրավախախտումների համար դատապարտվել են «res judicata» վճռով,
- (գ) մեղավոր են ճանաչվել մասնագիտական լուրջ սխալի համար, որը կարող է ապացուցվել ցանկացած հիմնավոր միջոցով,
- (դ) տվյալ երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան չեն կատարել սոցապահովագրական կամ հարկային վճարումներն այն երկրում, որտեղ նրանք հիմնադրվել են, պայմանագրային հարաբերությունների մյուս կողմ հանդիսացող անձի երկրում կամ այն երկրում, որտեղ պետք է իրականացվի տվյալ պայմանագիրը,
- (ե) «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ֆինանսական շահերին վնաս հասցրած՝ խարդախության, կոռուպցիայի, հանցագործ խմբերում ներգրավվածության կամ ցանկացած այլ անօրինական գործունեության համար դատապարտվել են «res judicata» ուժ ունեցող վճռով,

GUARANTEE:

The successful bidder will be required to sign the contract within 5 calendar days of being notified of the acceptance of their offer.

AWARD CRITERIA:

The evaluation of the bids will be done based on the offered price.

The purchaser may visit prospective suppliers or require other evidence to verify their ability to successfully handle the order before awarding the contract. In addition, the purchaser may visit successful service suppliers to confirm their compliance with the requirements set out in this Invitation to Tender, and in particular relating to ineligibility criteria or grounds for exclusion. The supplier may also be requested to supply additional documents to testify to the company's capacity to deliver within the requirements specified.

INELIGIBILITY CRITERIA:

Tenderers falling into any of the following cases are excluded from participation in the procurement procedure:

- (a) They are bankrupt or being wound up, are having their affairs administered by the courts, have entered into an arrangement with creditors, have suspended business activities, are the subject of proceedings concerning those matters, or are in any analogous situation arising from a similar procedure provided for in national legislation or regulations;
- (b) They have been convicted of an offence concerning their professional conduct by a judgment that has the force of res judicata;
- (c) They have been guilty of grave professional misconduct proven by any means that the contracting authority can justify;
- (d) They have not fulfilled obligations relating to the payment of social security contributions or the payment of taxes in accordance with the legal provisions of the country in which they are established or with those of the country of the contracting authority or those of the country where the contract is to be performed;
- (e) They have been the subject of a judgement that has the force of res judicata for fraud, corruption, involvement in a criminal organisation or any other illegal activity detrimental to New Generation Humanitarian NGO's financial

(գ) «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից ֆինանսավորվող այլ գնումների կամ դրամաշնորհի իրականացման ընթացքում պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման պատճառով հայտնվել են պայմանագրի խախտման վտանգի առջև,

(ե) ներգրավված են մանկական աշխատուժի շահագործման մեջ,

(ը) ոտնահարում են մարդու իրավունքները կամ դրսևորում խտրական վերաբերմունք՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն գրավոր հավաստում առ այն, որ նրանք ներգրավված չեն վերը թվարկված իրադրություններից որևիցե մեկում:

ՆԵՐԿԱՅԱԾՄԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

Մրցույթի հայտը պետք է ներկայացնել financemanagernqngo@gmail.com Էլ հասցեին ուղարկելով նշված փաստաթղթերը, նամակի թեմայի դաշտում նշելով՝ «Մրցույթ #. «Աուդիտ» NG-45-002-2012:

Մրցույթի հայտի ներկայացման վերջնաժամկետն է 2021թ. դեկտեմբերի 29-ը , ժամը 18:00-ն:

Հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ՝
ֆինանսական ղեկավար **Արման Սահակյանից**
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ

Հեռ.՝ +37460 478989

Էլ փոստ: financemanagernqngo@gmail.com

interests;

(f) Following another procurement procedure or grant award procedure financed by New Generation Humanitarian NGO, they have been declared to be in serious breach of contract for failure to comply with their contractual obligations.

(g) They are engaged in the exploitation of child labor

(h) They do not respect and violate human rights, show discriminatory attitude based on sex, race, skin colour, ethnic or social origin, genetic features, language, religion, world view, political or other views, belonging to a national minority, property status, birth, disability, age, or other personal or social circumstances.

Candidates or tenderers must provide a written statement with their tender documents that they are not in one of the situations listed above.

SUBMISSION REQUIREMENTS:

The tender application must be sent to financemanagernqngo@gmail.com email address, mentioning "Tender No. "Audit" NG-45-002-2012 in the subject line.

The deadline for receipt of the tender is December 29, 2020, 6:00p.m.

Further information can be obtained from:

Arman Sahakyan, Finance Manager, New
Generation Humanitarian NGO

tel: +37460 478989

email: financemanagernqngo@gmail.com ;

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ
TECHNICAL SPECIFICATIONS

Պայմանագիր No: «Աուդիտ» NG-45-002-2012

Contract No: "Audit" NG-45-002-2012

Պահանջվող տեսականին և քանակները/ Required types and quantities:

Անվանումը Description	Տեխնիկական պարամետրեր Technical parameter	Քանակը, հատ Quantity, unit
1. Աուդիտ	Խտրականության դեմ պայքարի ծրագիր Ժամանակահատված՝ 01.04.2020 – 31.12.2020 Աուդիտի իրականացման ժամանակահատված՝ Հունվար-Մարտ, 2021թ. (կողմերը նախապես պայմանավորվում են աուդիտի իրականացման օրերի մասին)	1

Աուդիտորը առաջադրանքը կատարում է համաձայն SNT / ISRS 4400 Engagements- ի՝ ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ համաձայնեցված ընթացակարգեր ապահովելու համար:

Աուդիտորը պետք է իրականացնի ստուգման հետևյալ ընթացակարգերը.

1. Ստուգել, որ ֆինանսական հաշվետվությունները համահունչ են ստացողի դրամաշնորհի ընթացքում ընդգրկված ժամանակահատվածին:
2. Յուրաքանչյուր բյուջեի տողի համար ստուգել, որ հաշվետվված ծախսերը համապատասխանում են բյուջեի տողում նշված բովանդակությանը:
3. Ստուգել, որ առկա են օժանդակ փաստաթղթեր (անդորրագրեր / հաշիվ ապրանքագրեր), որոնք հաստատում են ծախսերը:
4. Ստուգել, որ ծախսերը վերաբերում են դրամաշնորհի կողմից ծածկված ժամանակահատվածին:
5. Ստուգել, որ ծախսերը համահունչ են դրամաշնորհի որոշման մեջ նկարագրված գործողություններին:
6. Աշխատավարձի հետ կապված ծախսերի համար ստուգել, թե արդյոք աշխատանքային պայմանագրերը գոյություն ունեն, իսկ ծառայությունների մատուցման դեպքում՝ կատարողական ակտերը՝ նշված աշխատաժամանակով:

ԾԱՆՈԻՑՈՒՄ / Note:

- Նախքան պայմանագրի կնքումը Գնորդն իրավասու է փոփոխել գնման ենթակա քանակները մրցույթի ընդհանուր արժեքի +/-10% չափով: / Prior to Contract conclusion the Buyer is entitled to change the quantities to be purchased within a variance +/- 10% of the total tender price.

ԳՆԱՌԱՋԱՐԿ ՈՒ ՆԱԽԱՅԱՇԻՎ
QUOTATION FORM AND PRO-FORMA INVOICE

Ամսաթիվ/ Date ____

Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ,
To: New Generation Humanitarian NGO

Ուսումնասիրելով սույն [հրավերը](#) և նրա հավելվածները, որի ստացումը սույնով հաստատում եմ, -----
-----ը /կազմակերպության անվանումը/, ի դեմս տնօրեն ----- /Անուն, Ազգանուն/ առաջարկում է
[«Աուդիտ» NG-45-002-2012](#) համաձայն սույն [հրավերի](#) ----- ՀՀ դրամ գումարով կամ մեկ այլ
գումարով, որը կարող է ի հայտ գալ համաձայն կցված Նախահաշվի, որը կազմում է սույն Գնառաջարկի մասը:

Մեր առաջարկի ընդունման դեպքում մենք պարտավորվում ենք ծառայությունները մատուցել նշված
մատակարարման վերջնաժամկետներից ոչ ուշ:

Մենք համաձայն ենք մեր գնառաջարկը ուժի մեջ թողնել [2020թ.-ի հունվարի 10-ը](#)՝ սկսած սույն [հրավերում](#)
ներկայացված վերջնաժամկետից: Մեր գնառաջարկը ընդունելի կլինի մեր կողմից ամբողջ այդ
ժամանակահատվածի ընթացքում:

Having examined the [“Invitation to Tender”](#) and its attachments, the receipt of which is hereby duly acknowledged, ---
----- /organization name/, represented by director ----- /Name. Surname/ offers to supply and deliver [“Audit”](#)
[NG-45-002-2012](#) in conformity with the said [“Invitation to Tender”](#) for the sum of -----
AMD or such other sums as may be ascertained in accordance with the Pro-forma Invoice attached herewith and made
part of this Tender.

We undertake, if our Tender is accepted, to complete delivery by the Delivery Deadline date.

We agree to abide by this Quotation for a period of 30 days from the deadline for submission as specified in the
[“Invitation to Tender”](#), and it shall remain binding upon us and may be accepted at any time before the expiration of
that period.

Signed and Sealed by /Name, Surname Title/:

Ստորագրություն և կնիք /Անուն, ազգանուն, պաշտոն/. _____

ՆԱԽԱՅԱԾԻՎ
Proforma Invoice

Պայմանագիր No: «Աուդիտ» NG-45-002-2012
Contract No: "Audit" NG-45-002-2012

Անվանումը Description		Քանակը (լիտր) Quantity (liters)	Միավոր գինը ՀՀ դրամ Առանց ԱԱՀ Unit price, AMD Without VAT	ԱԱՀ Գումար ՀՀ դրամ VAT amount, AMD	Ընդհանուր գինը ՀՀ դրամ Total price, AMD
1.	Աուդիտ	3			
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀԴ GRAND TOTAL AMD					

Ծանուցում. Միավոր և ընդհանուր գների միջև տարբերության դեպքում առավելությունը կտրվի միավոր գնին:
Note: in case of deviation between the unit price and total price, unit price will prevail.

Signed and Sealed by /Name, Surname, Title/:

Ստորագրություն և կնիք /Անուն, ազգանուն, պաշտոն/. _____